

# ԻՐԱՎԱԳԱՆ

## Մշակույթ

Չկա Հասարակության Թյուրեմ  
անուանյա Իրավաբանների  
Ubi societas ibi ius

Երկշաբաթերթ  
թիվ 2 (5)  
2007 թ. փետրվարի 28

### ԱՌԱՋՆՈՐԴՈՂԻ ՓՈԽԱՐԵՆ

Որպես նորանշանակ գլխավոր խմբագիր, որոշեցի սույն համարում հավուր պատշաճի մի առաջնորդող գրել, խորհրդածել զարմանազան այս աշխարհի Դայոց խայտաբղետության շուրջ, մեկնել ու լուսաբանել մեր որդոց տարաբանված տեսականու մուք ու խրթին ծալքերը, տարակարծության հիմունքներին հավատարիմ՝ խոսել նաև աներկբա հավատարմության հիմունքների, ազգային ու հոգևոր աղավաղվող արժեքների, ոսկեցուլ ու տենդագին նյութապաշտության, անհագուրդ կլան-որկորների և անախորժ այլևայլ ախորժակների մասին... Նաև՝ մեր ազնվագույն Մեծերի ընտիր ու օրինակելի ժուժկալության և սակավապետության մասին:

Որոշեցի և իսկույն էլ գլխի ընկա, որ բոլոր իմ առաջնորդողները կամ արդեն բանաստեղծություն են դարձել, կամ էլ դառնալու ճանապարհին են, և բացառություն չէ նաև այս մեկը:

### ԿՐԿՆԱԴԵՐՍ (33 տող)

...Բա որ ճամփին լինեմ, ու մութն ընկնի հանկարծ, Օտար լինի ճամփեմ ու ամայի, Անբարավան լինեմ ու արևս հանգած, Ու մեղմ դողանջի տեղ սիրտս մայի,

Ու չքվա նույնիսկ, թե ինձ մարդ կկանչե Դայրենիքես անկախ ու ինքնիշխան, Ու քաղցի հետ մեկտեղ ոգու սո՛վը տանջե Ու պահանջե՝ սատկի՛ր, հե՛ գ Սարուխան,

Ու անապատ կյանքիս օազմերում անգամ ԱճՈՒխալտո լինեմ, անՍրահոն,- Ի՞նչ երեսով պիտի անդիններից ցանկամ՝ Ինձ ծայնակից լինի անմար Ավոն.

-Տե՛ր, իմ Տանը թող ինձ, որ սրտով իմ գառունկ Մատաղացու լինեմ, ոչ թե եսիք, Որ գծիկի տեղում էջմիահին-Գառնու Դայոց Ոգին հասնի խաչատեսիլ,

Որ չտանես մերոնց ի փորձություն դարձյալ, Այլ հանապազ փրկես մեզ ի չարե, Ձորազցնես մեր մեջ փառքե՛րը մեր անցյալ Ու չթողնես, Տե՛ր իմ, անմարգարե,-

Որ երբ ճամփին լինեմ, ու մութն ընկնի հանկարծ, Օտար լինի ճամփեմ ու ամայի, Անբարավան լինեմ ու արևս հանգած, Ու մեղմ դողանջի տեղ սիրտս մայի,

Ու չքվա նույնիսկ, թե ինձ մարդ կկանչե Դայրենիքես անկախ ու ինքնիշխան, Ու քաղցի հետ մեկտեղ ոգու սո՛վը տանջե Ու պահանջե՝ սատկի՛ր, հե՛ գ Սարուխան,-

Տե՛ր, Անուղ շուրթիս՝ զարթնեմ մահաքնից Ու հրաշքով օժվեմ Քո հարեհաս, Դավիտյանս փա՛ռք տամ Քեզ իմ Տնից Ու իղմանմ Քեզնով Կրկնաղբերս այս:

ՀՐԱՋՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ

### ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի՝  
Ես վախենում եմ,  
Շա՛տ եմ վախենում  
Բյուրավոր ու բու՛ք հավատացյալից,  
Բյուրատեսք ու սու՛տ հավատացյալից:  
Եթե աստված եք՝  
Փչեցե՛ք նրանց բոլոր մոմերը,  
Մարեցե՛ք նրանց կանթեղներն ամեն,  
Զանգրե՛ք նրանց ջահերն այլազան,  
Որ... եղիցի լու՛յս:

(«Նորոյա աղոթք»-ից)



### ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանը հրավերներ է ուղարկել միջազգային կառույցներին՝ Եվրոպայի խորհրդի և խորհրդարանական վեհաժողովին, ԵԱԶԿ և խորհրդարանական վեհաժողովին, ԱՊՀ և խորհրդարանական վեհաժողովին, Եվրախորհրդարանին, 2007թ. մայիսի 12-ին նշանակված խորհրդարանական ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություններով իրականացնելու համար:

### Փետրվարի 21. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ

#### հրամայական ՕՐԸ

Սիրելի ժողովուրդ, հազարամյա առողջ մշակույթի ժառանգորդ եղբայրներ ու Քույրեր, առանց որևէ խուճապի զուշացե՛ք հանընդհանուր թողություն պայմաններում սահագնորեն թխպակալող երկնազույն եթերի այստավարակ առանձին տեղատարափներին...

Որոշ հեռուստաալիքներում գալեշտական հազվագյուտ դիմակներով ասպարեզ եկած մի խումբ նորաթուխ «լրագրողներ» ու «թունդ երգիծողներ», իրենց մոլի երկրպագուների ծափողջույններից շիկացող մթնոլորտում, անձեռնամխելի աներեսությամբ համատարած **թամաշա** են դարձնում հայոց աղքատիկ առօրյան՝ արդեն տխմարության հասնող լեզվական տարաբնույթ ծամաձուլությունների և հայիտյական ժողգոնի միջազգային ճոխությամբ:

Սուկ ունկնդիր և ականատես՝ նույնիսկ արդարացի քրքմնջոցներով, անգամ ճշմարտորեն ջղաձգվող մեկուսի անհամաձայնությամբ դըժվար է դիմակայել այս ժանտափյուռ չարիքին, առավել ևս՝ արմատախիլ անել արդեն պարարտ հող գտած և պետական ամվեհասիկողությամբ խչմարված սույն գարշապալարը...

Սակայն անհնար չէ՝ շարունակա-

բար այստահանիչ միջոցներ ձեռնարկել:

Ուստի, արգո համախոհներ, քննադատաբար ընկալե՛ք և արժեվորե՛ք այն ամենը, ինչն անճաշակ գովազդի, անմակարդակ շուկաների և այլևայլ խեղկատակությունների տեսքով մեզ են հրամցնում նաև ազգային հորջորջվող եթերականները... Փաստացի ու վավերական օրինակներից բխող ձեր խելամիտ դիտողություններն ու առաջարկներն ուղարկե՛ք մեր թերթին (տվյալ հաղորդման օրն ու ժամը հնարավորինս նշելով), որպեսզի հասարակական հարեմապատ կարծիք ձևավորելու մտահոգությամբ մեր նկատառումները հանրությանը հայտնե՛ք լիաձայն, համոզված լինելով, որ հետևողական **լրագրային ասուլիսների** զորավոր արձագանքի շնորհիվ հետզհետե իսպառ հօդս է ցնդելու հայրենի անարատ շնչառության օգոնաբույր



շերտն ապականող անբարո հեքը...

Իսկ բոլոր տեսակի ԶԼՄ - ներին **ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ հրամայականով** բարեկամաբար հարկ է հորդորել՝ զերծ մնալ ապագային մեղսոտ գայթակղություններից, բացարձակ ժամանակի Աստվածատուր ոսկին որևէ գնով չփոխանակել առժամանակյա շահեկան արժաթով, և Աստծո հաճությամբ հայերիս շնորհված **Պրի** ու **խոսքի** այբբենաշունչ ոգուն հավատարիմ՝ բարի համբավ, նաև՝ մարդավայել ժողովրդականություն կայելե՛ն:

«ԻՐԱԿԱՆԱՑՆ ԵՆՎԱԿՈՅ»

# ՀԱՅՅԸ ԲԱՎԱՐԱՐՎԵՑ ԱՍՆԱԿԻՈՐԵՍ

**ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ** հասարակական կազմակերպությունը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով, «Տեղեկատվության ազատության մասին» 23.09.2003 թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 9-րդ հոդվածի պահանջներով, 2006 թվի հոկտեմբերի 21-23-ին տեղեկություն ստանալու նպատակով հարցումներով դիմել էր Հիրակի մարզի բոլոր 119 համայնքապետներին, խնդրելով իրեն տրամադրել:

1. Համայնքի 2006 թվի բյուջեի փաստաթղթի պատճենը,
2. Համայնքի ավագանու 2005 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի սեպտեմբերի 30-ը ընդունած որոշումների պատճենները:

Հարցումներ հղելուց նախորդած և հաջորդած 5 ամիսների ընթացքում ակումբը, ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իրազեկման նպատակով, կազմակերպել է 6 հեռուստատեսային քննարկում և 20 ռադիոհաղորդում տեղական հեռարձակող լրատվամիջոցների ուղիղ եթերում, կազմակերպել է անցկացրել է 6 ուսուցողական սեմինար, 5 քննարկում կլոր սեղանի շուրջ, որոնց մասնակցելու են իրավիճակ տեղեկություններ տնօրինող 200-ից ավելի պաշտոնյա, այդ թվում՝ վերոհիշյալ հարցումների հասցեատերերը:

2006 թվականի դեկտեմբերի 18-ին հասարակական կազմակերպությունը երկրորդ հարցում-նամակներն է հղել նախորդ հարցմանը չպատասխանած համայնքապետներին: Այդ նամակում, նույն տեղեկությունները հարցնելուց բացի, մեկնաբանվել են նրանց պարտականություններն ու նամակին կցվել է ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը:

Ի վերջո, 2007 թվի հունվարի 25-ին ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ՀՀ-ն որպես հայցվոր դիմել էր Հիրակի մարզի առաջին ատյանի դատարան, խնդրելով վերականգնել տեղեկատվության ազատության իր խախտված իրավունքը: Հարուցվել է քաղաքացիական 9 հայց ընդդեմ Հիրակի մարզի Ազատան, Հիրակ, Լուսաղբյուր, Ամասիա, Ողջի, Արդեհի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Հոռոմ համայնքների համայնքապետարանների:

Հայցապահանջներն էին հարցված տեղեկությունների տրամադրումը հասարակական կազմակերպությանը և դատական ծախսերի բռնազանցումը հոգուտ հայցվորի: Հիրակի մարզի առաջին ատյանի դատարանը, առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, խնդրելով էր հայցերը ըստ էության և ըստ Հիրակի մարզի առաջին ատյանի դատարանի նստավայրերի:

2007 թվի փետրվարի 15-ին և 22-ին ՀՍ Առաջին ատյանի դատարանի Ախուրյանի նստավայրում լավեց ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ՀՀ հայցն ընդդեմ Ամասիա,

**ժուռնալիստների «ԱՍՊԱՐԵԶ» ԱՎՈՐՄԲ**  
 ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
 ՀԱՅԱՍՏԱՆ-3104, ՅՈՒՐԻ, ԳՈՐԾԻՆԻ Թ. Փ. ՅԵՆՆԻՍՏ 0312 30622  
**JOURNALISTS' CLUB "ASPAZE"**  
 NON-GOVERNMENTAL ORGANIZATION  
 POUCHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3104, TEL: (0132 30622)  
 Email: info@aspazec.am www.aspazec.am



Ողջի, Հիրակ, Ազատան, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Արդեհիս համայնքների համայնքապետներ: Այդ ընթացքում և դատարանի դաժնի ճիշտում Հիրակ, Ազատան համայնքների ղեկավարները հայցվորին տրամադրեցին հայցով պահանջված տեղեկությունները, իսկ Փոքր Սեպասար համայնքի ղեկավարը հայցվորին տրամադրեց հարցված տեղեկությունների մի մասը: Այսպես, Մասնախանդ կողմի ներկայացուցիչները դատական նիստերի ժամանակ մասնակիորեն էին ընդունում իրենց ներկայացված հայցապահանջները. մասնավորաբար հարցումներով պահանջված տեղեկությունների մասերով հայցապահանջներն ընդունում էին և շեշտում, թե իրենք թերացել էին կատարել ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները, բացառությամբ Ազատանի համայնքապետի ներկայացուցչի, որի պլնդումը, իրենց տեղեկությունները հայցող նամակ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբից չեն ստացել: Ի պատասխան այդ պլնդումը, հայցվոր կողմը հատկապես շեշտում էր, որպես ապացույցներ հայցադիմումների հետ դատարան ներկայացված Գյումրու 3401 փոստատնից տեղեկատվություն տնօրինող պատասխանողներից հղված պատվիրված նամակների վճարային կտրոնները: Դատարանը դատակարար նիստերի ժամանակ պլնդեցին, թե որպես փոխհատուցում պահանջված դատական ծախսերի գումարը մեծ է 97.000-ական դրամ: Հայցվորի ներկայացուցիչներից Ա.Գ.Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի իրավախորհրդատու Արտուշ Գրիգորյանը հրաժարվեց ծառայությունների մատուցման համար իր փոխհատուցման մասնաբաժնից, իսկ մյուս ներկայացուցիչը Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Սուսաննա Մխիթարյանի իր ծառայության փոխհատուցման հայցապահանջը նվազեցրեց մինչև 30.000-ական դրամ:

Դատարանը դատավոր Մնացյանի նախագահությամբ 2007 թվի փետրվարի 22-ին վճռեց.

«...ԺԱԱ Հ4 հայցը բավարարել մասնակիորեն: Ամասիայի, Արդեհիս, Ողջի, Մեծ Սեպասարի համայնքների ղեկավարներին պարտավորեցնել կարճ ժամկետում ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ՀՀ-ին տրամադրելու այդ համայնքների 2006 թվականի բյուջեների

փաստաթղթերի, և 2005 թվի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ընդունված ավագանու որոշումների պատճենները և Ամասիայի, Ազատանի, Արդեհիսի, Ողջի, Հիրակի, Մեծ Սեպասարի, Փոքր Սեպասարի գյուղապետարաններից առանձին-առանձին հոգուտ հայցվոր կազմակերպության բռնազանցել 24.000 դրամ, որից 4000-ական դրամը որպես դատական գործերի պետական տուրքերի փոխհատուցում և 20.000-ական դրամը որպես դատական ծախսի այսինքն հանձնարարության պայմանագրով հանձնակատարի վճարելիք գումարի համար. ընդամենը 168.000 դրամ ...»:

**ԺԱԱ Հ4-ն այս հայտարարությամբ շեշտում է իր գոհունակությունը տեղի ունեցած դատավարության արդար և օրինական ընթացից:**

ԺԱԱ Հ4-ն շնորհակալություն է հայտնում Ա.Գ.Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի իրավախորհրդատու Արտուշ Գրիգորյանին և ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Սուսաննա Մխիթարյանին իրենց ծառայությունները բարեխղճորեն մատուցելու համար:

ԺԱԱ Հ4-ն շնորհակալություն է հայտնում նաև դատաբանության նկատմամբ ուշադրություն ցուցաբերած ՉԼԱ-ների և այն բարեխղճությամբ ու հետևողականությամբ լուսաբանած լրագրողներին:

Հաշվի առնելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի հսկայական նշանակությունը իշխանությունների աշխատանքի թափանցիկության և հաշվետվողականության գործում, խոսքի և տեղեկատվության ազատության արժեքի գերակայությունը կառավարման և կամ իշխանավարման արժեքի նկատմամբ, հավատարիմ մնալով ակումբի հիմնադրման գաղափարաբանությանը, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը հայտարարում է, որ հետևողականորեն ու համբերաբար մշտապես հետամուտ է լինելու հանրային նշանակության տեղեկությունների ստացման և իրապարհագրությանը: Այսով հորդորում ենք պետական և տեղական իշխանությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների ղեկավարներին տեղեկություններ տնօրինողներին, ուսումնասիրել ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը և կատարել դրանով սահմանված իրենց օրինական պարտականությունները:

Այս հորդորը խիստ հրատապ է հատկապես այն համայնքների ղեկավարների համար, ովքեր մինչ օրս չեն բարեհաճել մեզ տրամադրել 2006 թվի հոկտեմբերի 23-ին և դեկտեմբերի 18-ին հարցրած տեղեկությունները:

ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի անունից հորդորի նախագահ Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ

## Ա Ն Կ Ա Ր Ե Վ Ո Ր Ո Չ Ի Ն Չ Չ Կ Ա

## Ա մեն ինչ մարդկանց բարոյության համար Թռիչքուղիներից մինչև... կոյուղի

### ՍԱՆԿԱՊԱՐՏԵՂ ՌԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՉՈՐՔԵՐԻ ՄՊՍՆԵՐԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գյումրիում երկն մանկապարտեզ է բացվել ՌԻ ամուսնագրության դաշնային ծառայության (ԱԴՇ) այստեղ տեղակայված ՌԻ սահմանապահ զորքերի զորամասի սպաների երեխաների համար: Նորաստեղծ մանկապարտեզի բացման արարողությանը ներկա էին ՀՀ-ում ՌԻ ԱԴՇ սահմանապահ զորքերի վարչության պետ, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Բոնդարևը, Հիրակի մարզապետարանի և Գյումրիի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, բարձրաստիճան այլ ապավեններ:

Ս. Բոնդարևը կարևորեց մանկապարտեզի ստեղծումը: ՀՀ և ՌԻ կառավարությունների համատեղ ջանքերով հնարավոր եղավ մոտ 5 մլն ռուբլի հատկացնել և վերանորոգել զորամասի տարածքում գտնվող մի փոքրիկ շինություն՝ վերաներկված այն գեղեցիկ և բոլոր հարմարություններով ապահովված մանկապարտեզի: «Ներկայումս

մեր սպաների 32 երեխաներ իրենց ամհոգ մանկությունը հնարավորություն կունենան անցկացնելու լավագույն պայմաններում, և համոզված են, որ զորամասի ողջ անձնակազմն ըստ արժանվույն կգնահատի երկու երկրների կառավարությունների աշխատանքը», -ասել է Ս. Բոնդարևը:

Սանկապարտեզի բացման արարողությանը իր շնորհակալության ուղերձն էր հղել նաև Գյումրիի քաղաքապետ Վարդան Դուկասյանը: Քաղաքապետը նշել էր, որ հայ և ռուս զինվորների համատեղ ծառայությունը ՀՀ պետական սահմանը պաշտպանելու գործում երկու ժողովուրդների դարավոր բարեկամության արտահայտություններից մեկն է: «Մենք գնահատում ենք այդ աշխատանքը և մշտապես սատարելու ենք ձեզ», - ասված էր ուղերձում:

### «ՇԻՐԱԿ» ՕԳԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ ՉՈՒՏ ԳՂԱՌԻՍԱՅՅԻՆ ԶԷ

Մարտ-ապրիլ ամիսներին կնկարեն Գյումրիի «Շիրակ» օդանավակայանի վերանորոգման աշխատանքները: Օդանավակայանի թռիչքուղու վերանորոգման համար պետություններից հատկացվել է 1,7 մլրդ, լուսապաշտպանության համակարգի տեղադրման համար՝ 900 մլն դրամ: Թռիչքուղու վերանորոգման և լուսապաշտպանության համակարգի տեղադրման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև սեպտեմբերի 10-ը:

Ինչպես լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀ կառավարության առընթեր քաղաքապետի գլխավոր վարչության պետ Արտյոմ Մովսիսյանը, աշխատանքների ավարտից հետո օդանավակայանը կհամապատասխանի ԱՊ կարգին: Այն եվրոպական ավիացիոն կերպարներին, որոնք «Չը-վարթեթ»-ում չկարողանալով վայրէջք կատարել, խուսափում

էին «Շիրակ» օդանավակայանի օդապարտեզի որպես պահուստային օդանավակայան, այժմ արդեն կից են Գյումրիում:

Վերանորոգման նախահաշվարկային փաստաթղթերը ներկայացվել է փորձաքննությունը կատարողներին: Այս օդանավակայանը չի կարելի ընկալել զուտ որպես պահուստային: Այն կանոնավոր չվերթեր է կատարում դեպի Մոսկվա, Սոչի, Ռոստով:

Մարտից նախատեսվում է դեպի Մոսկվա երկու չվերթ բացել, միաժամանակ կգործի դեպի Կրասնոդար չվերթը: Հետաքրքրություններ կան նաև դեպի Սինդոդի և Եկատերինբուրգ չվերթեր կատարելու առումով:

2006 թվականին «Շիրակ» օդանավակայանն ընդունել է ճանապարհել և շուրջ 46 հազար ուղևորի:

### ՎԵՐԱԿԱՌՈՒՅՎՈՒՄ Է



ՀՀ պետությունից ֆինանսավորմամբ վերակառուցվում է Սեղոնի կոյուղացանցը: Տարիներ ի վեր անսարքության պատճառով այն նորմալ չի գործել, և կեղտաջրերը թափվելով քաղաքի միջով հոսող Սեղոյի գետ՝ արտոտել են այն: Աշխատանքները, որոնք իրականացվում են «Կասպի հորդոչին» ՓԲԸ-ն, սկսվել են 2006-ի ապրիլից: Այդ աշխատանքով արդեն ծախսվել է 170 մլն դրամ: Ըստ աշխղեղի Հայկ Մելքոնյանի՝ աշխատանքների մեծ մասն արդեն կատարվել է: Այս տարի կիրականացվի և 43 մլն դրամի շինման աշխատանք: Հիմնականում եղած կոյուղագծերը միացվում են իրար, իսկ քաղաքի երեք փողոցներում, որտեղ ընդհարմարապես դրանք չեն եղել, կառուցվում են:

Սեղոյում մոտ ապագայում կկառուցվի նաև խմելու ջրի մաքրման կայան:



### ՈՂ-Ե՛ ԼՅՈՒՐԵՆԿԱՆՈՂ

Նախորդ տարի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն է ժամանել 5 հազարից ավելի գրոսաշրջիկ՝ ավելի քան 60 պետություններից:

Այցելողների մեջ գերակշռում են ԱՄՆ-ի (1118), Ռուսաստանի (800), Ֆրանսիայի (464), Կանադայի (267), Իրանի (250), Գերմանիայի (210) քաղաքացիները: Ձրոսաշրջիկներ են եղել նաև Մալթայից, Թայվանից, Վենեսուելայից և այլ երկրներից:

Ինչպես «Լրմենարեն»-ին ասել է ԼՂՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետ Յուրա Չաքարյանը, նախորդ տարի Արցախ ժամանած հյուրերի թիվը 30 տոկոսով ավելի է 2005-ի ցուցանիշից: Նշված անձանց 70 տոկոսն այցելել է տուրիստական նպատակներով, 30 տոկոսը՝ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ են եղել, գործարարներ, բարերարներ, լրագրողներ և այլ հյուրեր: Ձրոսաշրջային նպատակներով այցելողների գերակշիռ մասը սփյուռքահայեր են:

Նշված ցուցանիշները չեն ներառում ԼՂՀ իշխանությունների հրավերով երկիր ժամանած պաշտոնական պատվիրակությունների, նաև դիվանագիտական առաքելությունների անդամների:

## ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո

Վերջերս Սանկտ Պետերբուրգում անցկացվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպված «Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված պատմական քաղաքների պահպանման և ղեկավարման ընթացքում գիտատեխնիկական նվաճումների կիրառումը» թեմայով միջազգային տարածաշրջանային գիտաժողով, որին մասնակցում էին տարածաշրջանային 28 երկրների 69 մասնագետներ:

Հայաստանը ներկայացնում էր ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պետ Արտյոմ Գրիգորյանը:

Ինչպես հայտնել են ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից, գիտաժողովի մասնակիցները քննարկել և սահմանել են «Համաշխարհային ժառանգության կոմպլեքսային կիրառման գործառնական դրույթներ»-ից բխող՝ համաշխարհային ժառանգության ցանկերում գտնվող հուշարձանների պահպանական և բուֆերային գոտիների, «բացարձիկ համընդգրկուն արժեք, իսկություն և ամբողջականություն» հասկացությունների, պատմական կենտրոնների պահպանությանն ուղղված ընդհանուր մոտեցման և պաշտպանության հիմնական ցուցիչներն ու

սկզբունքները: Գիտաժողովում մասնագետ-փորձագետները ներկայացրել են համաշխարհային ժառանգության ցանկերում պատմական քաղաքների պահպանության վերաբերյալ ավելի քան 35 զեկույց:

Հայաստանի ներկայացուցիչը հանդես է եկել «Երևանի պատմական կենտրոնի և համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Հայաստանի հուշարձանների քաղաքային և բնական համայնապատկերների պահպանությունը» զեկույցով:

Հաշվի առնելով պատմական քաղաքների և ընդհանրապես մշակութային ժառանգության պահպանությունը վտանգող գործոնների ակնհայտ աճը ողջ աշխարհում, գիտաժողովի մասնակից-փորձագետները հանդես են եկել առաջարկությամբ, ըստ որի Մշակութային և բնության Համաշխարհային ժառանգության պահպանության մասին կոմպլեքսային մասնակից երկրները համաշխարհային ժառանգության կոմիտեին պետք է հաշվետվություն ներկայացնեն ոչ միայն համաշխարհային ժառանգության ցանկերում ընդգրկված հուշարձանների, այլև՝ տվյալ երկրի կողմից ընդհանրապես հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող աշխատանքների վերաբերյալ:



### Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՆԱԼՆԵՐԻ

...Եթե եղմունը դարձրոց հաճախել, այժմ 5-րդ դասարան կլինեք: Թե որքան է դարձրոց գնացել՝ չգիտի: Դպրոցի մասին հիշողությունները սահմանափակվում են առաջին դասարանում տասներորդյակներից ստացած փոքրիկ հուշանվերով՝ ֆոտոալբոմի տեսքով (առաջին եղանակ տեղադրել էր տարեվերջյան լուսնկարը): Էլ չհիշե՛ չի ուզում հիշել, հուզմունքից դողալով և մի կերպ արցունքները խեղդելով ասում է. «ես շատ փրավորված եմ իմ հայրիկից. եթե նա իմ ալբոմը գտնե՛ չչպրտեր... ուզում էր մորս հարվածել, բայց ալբոմը դուրս թռավ բաց պատուհանից և հայտնվեց ցեխաջրի մեջ. այդքանով՝ չբավարարվեց, չթողեց դուրս գնան, վերցնեմ, և ես գրկվեցի բնկերներիս հիշելու վերջին հնարավորությունից: Նա ինձ ամեն օր ծեծում էր, ստիպում մուրազկանություն ամել, գոնե մեկ շիշ օդու գունար վատակել: Երբ մայրիկս փորձում էր ինձ պաշտպանել, նրան էլ էր ծեծում: Չեղք չէր տալիս միայն փոքր քորոց. նրան շատ-շատ էր սիրում, այնքան, որ ես նախամեծում էի և չէի սիրում նաև քորոց: Սեծանալով հասկացա, որ քույրս մեղավոր չէ»:

Էղմունը՝ երկու երեխաների հետ հեռագած մոր տեղը չգիտի, իսկ հոր մասին լսել անցած չի ուզում. «Հափա-հաս դռնամաս՝ ազգաճունս փոխելու եմ»...

◆ Լռուռ մարզպետարանի երեխաների իրավունքների բաժնում Էդմոնի մասին տեղեկություն չունենին: Նույն բաժնի վարիչ Նարեկ Սարգսյանը պարզաբանեց, որ պարտուկից դուրս մնացած երեխաների ցուցակը պետք է ներկայացնեն դպրոցները. այդպիսի տվյալներ բաժնից ղեռն չի ստացել: Երեխաների իրավունքների բաժնի կողմից կատարված հետազոտությունների համաձայն, երեխաները հայտնվում են փողոցում ծնողների կողմից

Վանաձորի ոստիկանության Անչափահասների բաժնի 2006թ.-ի նոյեմբերի տվյալներով՝ Լռուռ մարզում գրանցվել է 57 իրավախախտ, որից 35-ը՝ մարդկեմտրոնից, 2 մուրացիկ՝ Վանաձորից, և պարտադիր ուսուցումից դուրս մնացած 5 երեխա՝ գյուղական համայնքներից: Ըստ նույն աղբյուրի՝ մարզում թափառաշրջիկներ և թմրամուլներ չկան:

անտեսման և չարաշահումների հետևանքով: Նման դեպքերը բացառելու նպատակով «Լեռնարդո Գմյուր» երեխայի պաշտպանության սոցիալական հիմնադրամը սեմինարների շարք է անցկացնում Լռուռ մարզում: «Երեխաների նկատմամբ չարաշահումների և անտեսումների վերաբերյալ իրազեկության բարձրացում» թեմայով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Լեռնարդո Գմյուր» երեխայի պաշտպանության սոցիալական հիմնադրամի կողմից իրականացվող եռօրյա սեմինարների շարքը մեկնարկել է դեռ անցած տարի: Կազմակերպիչներն արդեն 8 սեմինար են անցկացրել: Առաջին սեմինարներ են կազմակերպվել ուսուցիչների, բուժաշխատողների, ոստիկանների, նախակրթարանների աշխատողների, ՏԻՍ ներկայացուցիչների, լրագրողների համար: Այս տարի 3 սեմինար է անցկացվել խառը խմբերով: Վերջին խմբում ներգրավված էին տնային տնտեսուհիներ և ուսանողներ: Ուսանողներին այս սեմինարն անհրաժեշտ է որպես ապագա մանկավարժներ: Արդեն իսկ սեմինարին մասնակցած մանկավարժներն էլ նշում են, որ այս սեմինարի անհրաժեշտությունն զգացվում էր, քանի որ այսօրվա սերունդը նախ շատ պահանջկոտ է, նաև նոր մոտեցումներ են անհրաժեշտ նրանց հետ չփվելու, հավասարը-հավասարին ընկալելու համար: Տճային տնտեսուհիներին սեմինարին ներգրավելու նախաձեռնությունը նույնպես պատկանում է մանկավարժներին... Ծնողական ժողովների ընթացքում շփվելով ծնողների հետ, նրանք զգացել են, որ տնային տնտեսուհիներն ավելի դժվար են հարողորակցվում իրենց երեխաների հետ: Պատճառն այն է, որ նրանք պարփակված են

բնակարաններում, տեղեկատվության միակ աղբյուրը հեռուստատեսությունն է, և նոր գիտելիքներն անհրաժեշտ են երեխաների հետ շփման եղանակով համար: Բոլոր 200 մասնակիցներն էլ կարևորել են իրենց մասնակցությունը սեմինարին: Այն անդրադառնում է նաև ծնողների հոգեվիճակին (որից շատ հաճախ բխում է բռնությունը), վեր հանելով երեխաների հանդեպ բռնության պատճառները, հետևանքներն ու շարժառիթները: Քննարկվեցին ռիսկային գործոնները, դրական ծնողավարության, կոմֆլիկտների հարթման և, իհարկե, կանխարգելման ուղիները:

Սեմինարի մասնակիցներն «առաջին ծիծեռնակներն են», որ կտարածեն ստացված գիտելիքները իրենց կրթօջախում, աշխատավայրում և հարազատների շրջանում: Այսպիսով իրականություն կդառնա սեմինարի հիմնական նպատակը՝ իրազեկության բարձրացումը: ◆

7.9. Արցախ պուրակում Էդմոնի քոյրըն են ճանաչում. երբ փորձեցինք նրա «հետքը» գտնել, հավաքված ծերերը գրույցից կտրվելով մեզ ասացին, որ Էդմոնն արդեն մեկ շաբաթ է մուրացկանություն չի անում: Նրան խղճացել, իր տուն է տարել, տաք ուտելիքով ու հագուստով ապահովել է տիկին Գրետան և արգելել՝ մուրացկանություն անել: Էդմոնն այժմ աշխատում է և խոստացել է, որ հենց աշխատավարձ ստանա տիկին Գրետայի համար քաղցրավենիք է գնելու:

ՆԵՒԻ ԴՎԿՅԱՆ



ՀԱՐՁԱՆՔԻ ՏՈՒՐԸ  
ՄԵԾ ԼՈՒՆԵՑՈՒ ՅՈՒՇԱՍԿԻՆ

**Հուլիանյան Թումանյանի (1869-1923թթ.)** Ե. Չարենցի գեղանկարչական ամենամեծ արվեստագետի անհիշատակ մեծագույն ստեղծագործություններից մեկը՝ «Բարձրագույն կարգով նշվեց փետրվարի 19-ին»:

«Թումանյան» հայրենակցական միության և Հայաստանի գեղարվեստի միության նախաձեռնությամբ հավաքվել էին գրական հասարակականության ներկայացուցիչներ, բուհերի ուսանողներ, երևանի մեծ գրողի անունը կրող դպրոցի մականավարժներ և աշակերտներ...

Այլ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հրապարակուս գտնվող Հովի. Թումանյանի արձանի մոտ հանդիսավորապես արժեվորվեց Մեծ Լոռեցու ծննդյան 138-րդ տարեդարձի խորհուրդը:

Արձան պատվանդանի պատկերներ և ծաղիկներ դրվեցին:

Ձեռնդեղով սպիտակ մեխակներով և սպիտակ ժապավեններով հյուսված պասկը, «Թումանյան» հայրենակցական միության նախագահ Սուրեն Մամիկոնյանն առաջ, որ ճերմակ գույնը տվյալ պարագայում նաև խորհրդակազմի է, քանզի անցյալ դարասկզբին Թումանյանն այդ գույնի պատահաններով ու դրոշակներով, ճերմակ մի հեծած, շրջել է Կովկասում, ժողովուրդների միջև սեր և բարեկամություն քարոզել. այնպես որ և գրողը, և իր գործը օդի ու ջրի պես անհրաժեշտություն են բոլոր ժամանակների համար...

Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանի խոսքով՝ Հովի. Թումանյանի գեղանկարչական իր ստեղծագործություններն են, որոնք հայտարարում են հզոր շողարձակում են դարերի միջով...

Այնուհետև դպրոցականները և ուսանողները հնչեցրին ամենայն հայրջ Բանաստեղծի պոեզիան, որից հետո ներկայներն ուղղվեցին դեպի մեծ գրողի տուն-թանգարան: Այնտեղ նրա ծննդյան օրը նշանավորվեց իր անունը կրող տիկնիկային թատրոնի ներկայացմամբ:

Հ. Թումանյանի ծննդյան տարեդարձները նշվում են ամեն տարի, սկիզբ առնելով արձանի մոտ կազմակերպվող արարողությունից, այնուհետև շարունակվելով Թումանյանի անվան առջվոր հիմնարկներում և ուսումնական կենտրոններում, սպա հովտներեղին եզրափակվում բանաստեղծի ծննդավայր Լոռու Դսեղ գյուղում, որտեղ ամփոփված է Բանաստեղծի սիրտը (հայրենի) Թիբիլիսիի Հավաքար հայկական թաղամասում գտնվող Խոջիվանցիի հայ մշակույթի գործիչների պանթեոնում է):

# 79 ՏԱՐԻ ԱՆՑ. ՍԱՐՅԱՆԸ ՄՆՈՒՄ Է ՍԱՐՅԱՆ

Փարիզի Իսսի-լե-Մուլիհնո արվարձանում, Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում, բացվել է հայ իռչակավոր գեղանկարիչ Սարտիրո Սարյանի աշխատանքների ցուցահանդեսը: Խաղաթղթերի Ֆրանսիական բանգարանում ցուցադրվում են նկարչի 110 ստեղծագործությունները, մասնավորապես՝ գեղանկար, գրաֆիկա, ջրաներկ, ինչպես նաև «Ալմաստ» և «Քաջ Նազար» ներկայացումների համար կատարված էքզիզներ:

Արվեստասերների ուշադրությանն են ներկայացված այնպիսի կտավներ, որոնք Սարտիրո Սարյանի երկար ու բեղմնավոր կյանքի այս կամ այն շրջանի վավերագրերն են. «Ձիհորի մոտ: Շոգ օր», «Քայլող կինը», «Դեզով բեռնված գունեջը», «Դիմակներ», «Պարսկուհի», «Հայաստան», «Արա-

գած»... Ցուցահանդեսում առանձնահատուկ տեղ ունեն նաև Սարյանի ժամանակակիցների դիմանկարները, որոնք ֆրանսիացի այցելուներին հնարավորություն կտան ծանոթանալու հայ բանաստեղծներ Ալ. Ծատուրյանին, Ավ. Իսահակյանին, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանին:



Ինքնանկար 1968 թ.

Մեծ նկարչի ստեղծագործությունների ցուցահանդեսը բացվել է փետրվարի 2-ին և կտևի մինչև մարտի 31-ը:

## ԱՆՊՐԱՊՐԱԶ՝ ԾՆՆՊՅԱՆ 127-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



**ՍԱՐՏԻՐՈ ՍԱՐՅԱՆԸ (1880-1972)** 20-րդ դարի հայ և համաշխարհային գեղանկարչության վարպետներից է: Նա մի շարք բարձրագույն մրցանակների է արժանացել: Նրա մասին տարբեր լեզուներով բազմաթիվ մենագրություններ են գրվել: Արվեստասերների սիրելի գրքերից է Վարպետի «Իմ կյանքից» կենսագրական ծավալուն հուշագրությունը, որից և բաղված է սույն հատվածը.

«Վեներտիկյան միջազգայինից հետո Փարիզում կազմակերպված անհատական ցուցահանդես նկարչի իմ երկրորդ ելույթը հանդիսացավ եվրոպայում: Ես բավականին շատ էի աշխատել և ցուցադրեցի շուրջ քառասուն աշխատանք. նատյուրմորտներ, բնանկարներ, դիմանկարներ, որոնք ուշադրություն գրավեցին ու արժանացան արվեստաբանների և արվեստին մոտիկ կանգնած այլ մարդկանց բարեկարծությանը:

Ցուցահանդեսը բացվեց 1928 թվի հունվարի 20-ին Էդուարդ VII փողոցում, Շառլ-Օգյուստ ժիրարի ցուցասրահում: Թողարկվել էր նկարագրող փոքրիկ կատալոգ՝ Լուի Վոկսելի առաջարկով:

Բացման օրը ցուցասրահը լեփ-լեցուն էր ֆրանսիացիներով, ռուսներով, հայերով: Բոլորը շնորհավորում էին ինձ և բաջվերանքի խոսքեր ասում: Ինձ հետ միասին ուրախանում էին նաև ընկերներս. Արշակ Չոպանյանը, Հակոբ Գյուրջյանը, Էդգար Շահինը, որոնք շատ էին օգնել ցուցահանդեսի կազմակերպման գործում»...

Սկարում՝ Սարտիրո Սարյանը Փարիզի իր ցուցահանդեսում: 1928թ.

# Վախճանվեց պոլսահայ մեծ բանաստեղծ ԶԱՐԱՏԸ

**Ձաիրադը (Ձարեհ Յաղոզգյան) ծնվել է 1924 թ. մայիսի 10-ին, Կ. Պոլսում: Ավարտել է տեղի Միխայրայան լիցեյը (1942թ.):**  
**Նրա բանաստեղծությունները հիմնականում ներթափանցված են մեծ քաղաքում ապրող «փոքր» մարդու զանգվածային ողբերգությանը, հասկանալիում են բարձր արտահայտչամեթոդով, ինքնատիպ բեմաների բազմազանությամբ («Մեծ քաղաքը», 1960, «Գունավոր սահմաններ», 1968, «Բարի երկինք», 1971, «Վամաչ հող», 1976, «Մեկ քարով երկու գարուն», 1989, այլ ժողովածուներ): Ձաիրադի գործերը թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, հունարեն, լիտվերեն...**

հաշվել, թեպետ ելևմտագետ չէ: Եվ ո՞նց է հաշվում (կարո՞ղ եք).  
2000ը տեսները կ'ըստինք  
-տեսանք-  
երեք տարի ալ արբեցանք միատեղ  
Հիմա կարգը եկավ 3000ին  
Հեղ մը որ հասնիքը 2999ին  
անդին տարի մը կը մնա միայն  
Եթե չէք հավատար-  
-կամ համրել չէք գիտեր  
-կամ չէք գիտեր պարիլ («2003էն վերք»):  
Այնպես որ կարողանում է Ձաիրադը տեսնել այս աշխարհի չարն ու բարին, իմաստավորել ամեն ինչ և, սակայն, ապրելով հանդերձ՝ չնոռանալ Լիմելիքի մասին, ինչն անխուսափելի է ու գալու է ուզած-չուզած: «Սամաթիայի կայաքաղաքը» թերթված ունի, ուր շոգեկառքից իրեն են նայում նրա անցած իարազատները՝ Հաջի Լևոնը, մեծ մայր Ֆորթյունը, մայրը՝ Անգիեն, մորաքույր Արսիեն, դեղին կատու ժոնտորը, մանչուկ Սիբեն...».

*Չեմ գիտեր ինչու այդքան խոնավ եմ:*  
Թերևս առաջին անգամ վերապահությանը մոտենամ Ձաիրադի բանաստեղծությանը, որովհետև այս շոգեկառք ոչ ոք չի իջնում, այն միայն «ճամփորդ կ'առնե», սակայն այս հանգամանքն ամենևին էլ չի ստվերում Ձաիրադի բանաստեղծության արժանիքը: Այստեղ և կարոտով սրբագործված հուշ կա, և մի օր այս շոգեկառքով ճամփորդելու անխուսափելիության գիտակցում, դեռևս այստեղ մնալու կորով, ու կյանքի կարոտ կա: Ուզած-չուզած գալու է ոչ ինչը: Լսե՛քք Ձաիրադին.  
Շատը գիտնալ  
եւ այդ շատը գիտնալ քիչի վերածել  
այդ քիչով  
կարենալ շատը պատմել

### Ձուրը պատեն վեր ...

Ձաիրադը ութսուն և ավելի տարեկան է: Այս հանգրվանի հանդեպ էլ հեղինակն ունի երկակի վերաբերմունք: Տարիների բեռն արդեն իսկ ինչ-որ բան նշանակում է ու նկատելի է, բայց և

Նորեն այ դժգոհ չէր կենսո՞քն Ութսունոցը  
Պատրաստ էր համրելու Միջև ինձուսը:  
Այնպես որ Ձաիրադը կարողանում է ապրել (այսինքն՝ սիրել), բայց ատել չգիտի, կարողանում է միշտ բարի մնալ, որովհետև չարությունն իր համար չէ, կարողանում է

Շոգեկառքը ճամփորդ կ'իջե՞՞ք՝ ճամփորդ կ'առնե՞- ու ճամփոր կ'ել է յամրորը՝ Ձեռք կը չարձան թորրի- ձեռք կը չարձան ինձի՝ Տեղ Երեղն կը խաչակնթե կատուն վերջին միայն մը կ'ըստ Շոգեկառքը կը բալել հետզհետեւ աւելի արագ

Քիչի շատի որոնումին մեջ մոռնալ Անշեղ գնացքը ապիկար օրերուն Որ շատ կամ քիչ կը միանան իրարու Ոչինչի մը կը յանգից («Ոչինչ»):  
Բանաստեղծի խոհերի ու մահվան ճանապարհները համախառն խաչաձևավում, և սրա վկայությունն են «Վերապրիլը սուր», «Եւս», «Տօճավանա», «Օղակներ», «Հարցուկործ», «Ճամբաս», «Ցուլամարտ», «Մեւ գիծը» և այլ թերթվածներ, որոնց մեջ առաջին հերթին գիտակցվում է մարդն իր համարձակությամբ, համառոտությամբ, արածի ու թողածի գիտակցման, մահվան հանդեպ երգիծող վերաբերմունքով, որ մարդու մեջ բանաստեղծի

## ԶԱՐԴՍԻՒ՝ «Զուրը պատեն վեր» (Ստանբուլ, 2004թ.) ժողովածուին նվիրված համանուն այս գրախոսությունը՝ որպես ԽՈՐԻՆ ԽՈՆԱՐՅՈՒՄ մեր ավագազունյն գրչեղբորը

որակ է հայտնաբերում:

Սակայն Ջահրատը չի մտախեղվում միայն այս խնդրի շուրջ: Նրա համար չափազանց կարևոր է ժամանակի սրված զգացողությունը, որ այս կամ այլ կերպ դրսևորվում է նրա ստեղծագործության մեջ («Ինչ որ գրեցի կար այսօրվան մեջ»): «Զուրը պատեն վեր» ժողովածուի մեջ մի գործ կա՝ «Փլատակներ», որ պարզուն է իրողությունը:

Որ շենքը որ փուլ գայ հոս կամ հոն  
կամ երկու փողոց անդին  
գիս կը գտնեն փլատակներուն տակ

Ու փլատակներուն տակ  
Կ՝անհետին որու ազգիները  
բոլոր մեծութիւններուն

Թանձր փոռի մը կ'իջնէ-կ'իջնէ  
երթուղիներուն

Բոլոր երթուղիներուն-  
Մի՛նչէ որ լոյսը ծագի  
ու գիծերը պարեն  
անջրպետին մէջ

Անջրպետին մէջ  
Նոր շէքը մը կը փչի հոս կամ հոն  
հոն- երկու փողոց անդին

Յոն երկու փողոց անդին  
գիս կը գտնեն դարձեալ  
փլատակներուն տակ

Սեծութիւններ կը մնան առանց  
ուրուագիծի:

Նախ՝ երկիր մոլորակն այնքան է փոքրացել, որ դրսևորվող անձն մի իրողություն գիտակցվում է «հոս կամ հոն կամ երկու փողոց անդին»: Ասել է՝ գեղարվեստական կամ կենսական՝ իրական պայմանականության տարածքն է փոքրացել, ժամանակն է դարձել չափազանց դյուրագագ: Եվ 1988-ի դեկտեմբերի 7-ը կամ 2001-ի սեպտեմբերի 11-ը (հայոց ցավն ու աշխարհի դուրբերությունը) ծնուն է մույս զգացողությունը՝ փլատակ ու փլատակների տակ հայտնված մարդը, ով նույնական է դառնում հեղինակի հետ: Բոլորն ու ամենայն ոք բեկվում ու սկեռվում են հեղինակային ես-ի մեջ, որ ես չէ այլևս, այլ մարդ, ամենասովորական կիկո, որ փորը չէ ոչ էլ մեծ: Չկան մեծություններ, շենքի մեծությունը (նյութորթյան երկվորյակները) և մարդու անկրկնելիությունն են դառնում անուրվագիծ ու փոքր:

Սակայն մարդու համար դրսևորվող մարդկային ցավը տողերի արանքից ներխուժում է մեր հոգիներն ու մտածողության մեջ, այլևս Ջահրատի զգացողությունը դառնում է մեր սեփականը: Եվ իրականության թվացյալ արտերդը էլ անվուն արտերդի թվացյալ իրականության, իսկ ավելի ճշգրիտ՝ վերապրելով արտերդը՝ հեղինակն այն դարձնում է իրականություն կամ իրականության մեջ է տեսնում անհեթեթությունը: Բայց և չկա զսպում, կա

մարդկայության հորձանք: Չկա այլևս ռեալիզմ, որ պահ առ պահ կարող է գետնաքար թվալ, կա իրականության անճանցուն՝ անակահից ու մակդիրից ազատագրված (սակամա է զուգահեռվում Յր. Սարուխանի անճանց մակդիրը՝ «Ոչ մի սիրատուն, Չտես անակահից»), զուսպ, չափակշռված, ճշգրիտ: Ու մի պահ թվում է, թե Ջահրատն ասես միտումնավոր հեռացել է գեղարվեստից ու ստեղծում է ճշգրտված, արտաքուստ զգացմունքազերծ քերթված, սակայն անմիջապես էլ ելևէջում է հակադրությամբ, որ սա բանաստեղծության նոր որակ է, ու մակդիր՝ անանցվող զգացողություն, չի պահանջում: Ասել է՝ չկա անզգացմունք բանաստեղծություն, զի զգացմունքը նրա անարդիտի հատկանիշն է, չկա մտածական՝ ինտելեկտուալ բանաստեղծություն, ինտելեկտը ընթերցողի գիտակցության բաղկացուցիչն է: Շատ տարիներ առաջ Ջ. Խրախունին էր ասել. «Չոր մը պիտի գայ, որ բանաստեղծութիւնը գլուխով պիտի կարդացուի»: Եվ ով զգացմունք ու ցավ չի տեսնում Ջահրատի, Յ. Եղոյանի, Յովի. Գրիգորյանի, Ա. Շեկոյանի, այլոց գործերում, ուրեմն նրա մտտ «ինչ-որ բան սխալ է»: Զգացմունքներն այն հենքն են, որոնցից ծխարձակվում են Ջահրատի քերթվածների մտածումի շիվերը: Այսպես է ձևավորվում գահրատյան յուրահատուկ գեղարվեստական մտածողությունը: Եվ եթե Պ. Սևակը բանաստեղծական շարք էր գրում՝ «Վերնագիրը վերջուն», ապա Ջահրատը բանաստեղծության վերջն է սկիզբ բերում՝ ընդհանրապես սկզբի կրահունը թողնելով ընթերցողին: Նրա գործերը կարծես վերջաբաններ լինեն, որոնցից առաջ կարելի է եմքաղել որոշակի ճշգրիտ պատմություն - զգացողություններ: Եվ այս վերջերը մի նոր սկիզբ են, դեպի որոնք է ուղորդում Ջահրատը՝ հավաստելով, որ կարելի է այս աշխարհում ամեն ինչի նայել յուրովի՝ գահրատյանով: Սա հավատաձեք է, որ ունի իր չափաժող «հանդերձը»:

Քերթուած մը պէտք է ըլլայ հունտի պէս  
Որ երբ աւարտի

Չաւարտի - ծիլ տայ-վերապրել մեզի հետ:  
Ավետարանական «Ցորենի առակի»  
հանգույն:

Ջահրատի հետ վերապրում ենք անզգամ քարն ու նրա հետ կապվող զգացողությունները: Ուր էլ ապրի բանաստեղծը, ինչ պայմանականություն էլ պարտադրվի նրան, փիտի ասի իր խոսքը քեկուզ այլաբանությամբ կամ սիմվոլով, բառի փոխաբերությամբ կամ ընդամենը գեղարվեստական փորձի պատկերով:

Յայն Յայատան բառերը չկան նրա գործերում, բայց կան առանց ուղղակի մատնանշման: Եվ հայոց գեղանկարչության նախապետ Մարտիրոս Մարյանի կյանքի վերջին շրջանի գծանկարչեանկարների կամ «Պիկատոյի» մեկ-երկու գծով պատկերված ցլերի նման է իրականացվել այս պատկեր-քերթվածը, ինչ-ձև՝ պատեպատ խիվենք, մերօրյա վարպետի՝ Յակոբ Յակոբյանի գործերի գուսպ ու չափված գիծն ու զուևագագողությունն ենք տեսնում:

Այս կամարեն  
երբ նայիս  
Դէնդ աշխարհ մը քարի  
եւ ժայռի-

Ու մարդիկ  
-Մարդիկ  
Չոր քարի վրայ  
բուսնող ծառի պէս («Քարէ կամարը»):  
Ու թե ինչնք նաև «Մեծաքանչ»-ը,  
«Պարոնյան»-ը, «Մեքոպաբուրյ»-ը,  
«Կոմիտաս»-ը, այլ քերթվածներ, ապա  
Ջահրատի ժառանգորդությունը հայ գրին  
ու մշակույթին դառնում է ամերկաբա ու  
հաստատուն:

«Քարէ բառեր - ինձ գինվորներս դուք եք-  
ես ձեզ մեկ մեկ կորչեցադորեն ու



Ջահրատը բանաստեղծներ Յրայա Մարտիրոսի (աջից) և Յրայա Թամարայանի  
ընկերակցությամբ (ԳԳՄ XIV համագումար, 2005թ. մայիսի 20, Երևան)

գորագունը գորագունը  
Իմ ձեռքով կշարեն,- ժամանակին  
սասց Ջահրատը՝ հավաստելով, որ ինքը  
նազնավար-գորավար Ջահրատն է, նա,  
ով կարող է ամենամանապատելի բառա-  
շղթա ձևավորել՝ «ջուրը պատեն վեր»,  
բայց լուծումը-բարոյական այնքան է  
անպատելիորեն պարզ, որ սկսում ենք  
ինքներս մեզ ճանաչել: Եվ գորավարը  
պիտի իր գինվորների սովորեցնի կրվե-  
լու ու հարթելու արվեստը, բացատրի  
նրանց, որ միօրինակ ապրելն արդեն  
պարտություն է: Նրա գինվորներն այդ  
գիտեն, հաճախ կույի են ելնում, երբեմն էլ  
դառնում են պահեստի գինվորներ: Այդ  
պատճառով էլ՝

Բառը ձանձրացաւ  
միշտ նոյնիմաստ սարելէ  
Իր ստորիները թօթափեց  
Փորձեց նոր իմաստ

Ինչ ինչ կ'ըտ-մարդիկ չհասկցան  
Նորն ալ առին մէկ կողմ դրին  
որ օր մը տեղին գործածեն:

Ջահրատը միայն գորավար չէ, այլ  
նաև սուրիանդակ, որ ապահովում է երկու  
բառերի միջև կապը:

Մէկ բառն միւսին ծանբան մերթ կարծ է  
հարց ու հեզասահ  
Մերթ ալ մէկ բառն միւս բառին երթալ  
դիտար է  
-Ճանբան խութերով լեցուն-

Իսկ կայ որ ճանբան անել - ելք չունի-  
Բառը չի հասնիր ուրիշ բառի քով  
կը մնայ միմակ -

Մեր ըսելիքը կը մնայ այբաբան-  
«Մէկ բառն միւսին»:  
Եվ այս անգամ էլ ասես խորամանկուն  
է քերթողը, քանզի քիչ անց ինքն է բացա-  
հայտուն իր «Արուեստ քերթողական» - ի  
գաղտնիքներից մեկը:

Երբ գրել փորձեն  
Միտքս կ'իյնայ «լոյս» բառը նախ  
Եետոյ «կատուն» -  
կը խորհիմ  
- ինչ կապ կայ երկուքին միջեւ -  
ու կը գրեն

- կատուն լոյսը կերա-  
- սենեակը մնաց մութին մէջ-:  
Սա է քերես, որ Ալբեր Զամյուկ կողմից  
իմաստավորվեց իբրև «աբսուրդ», և այն-  
քան համոզիչ ու վստահ է Ջահրատը, որ  
կարողանում է կենսականը պատկերել  
այդ քսուրդի միջոցով: Ու չենք կասկա-  
ծում, որ լոյսը վերադարձնելու է մեզ,  
կամ էլ ակնաբանություն ենք լինելու մեկ այլ  
քսուրդի:

Կամ թէ կը գրեն  
- լոյսը կերաւ կատուն-  
- Սենեակին մէջ կատու չմնաց-:  
Ու այս անգամ էլ վստահ ենք, որ խեղճ  
կատուն է վերադարձվելու մեզ, բայց

խնդիրն արդեն իսկ իրագործված է այլ մի  
հանգրվանում՝ «բառը հասեր է ուրիշ բա-  
ռին քով - չի մնար միմակ»:

Ջահրատի բառը ապրող ու շնչող,  
գոյող արարած է, որ զուրկ չէ մարդկային  
նախանձից ու անտարբերությունից, և հո-  
րիզոնական քայլող բառը նախանձուն է  
ուղղահայաց քայլողին, սա էլ նախան-  
ձուն է հորիզոնական քայլողին,  
«Իսկ բառը  
բառարանին մէջ ընկողմաներ է անշարժ  
արյակի հարցը չունի»:

Ու բառն այդ մեր ինքնաճանաչումի  
հայելին է, որ մեզ է ցուցաբերում ամենեցու  
հոգիներում ծվարած վայրենության ապա-  
շխարանը:

Մերթ ալ - մեր չափով  
Սեծ կամ ազտիվ  
գայլեր ենք  
յոյտուելու պատրաստ

Կը յօշոտենք - յետոյ  
բառատուն օր  
ուսուի երգ կ'երգենք («Գայլերգ»):

Այսքան դաժան ու այսքան ճշմարիտ  
կարող է լինել միայն մեծ բանաստեղծը:  
Այս անգամ էլ մի ներքին զուգորդում ենք  
ապրում՝ ինչու լավ Ավ. Բասախլանի տողը,  
«Օ կարեցեք, օ կարեցեք լեզուները թըր-  
չուններ»:

Դառնանք Ջահրատին՝ վերիինչելով  
նախորդ «Արվեստ քերթողության»-ը,  
մասնավորապես՝

Քերթվածն անուղղա անառակ մըն է  
Սիհանալ կուզե:  
«Զուրը պատեն վեր» ժողովածուի մեջ  
արդեն չկա ցած, բայց դուրեկան  
«պզտիկներ» կան՝ «Եռանկուններ»  
շարքն ամբողջությամբ: Այսպես՝


Մերթ մեր իտուլ կը տապկուիմք  
Իող կայ - կրակ կայ -  
Ու տապակ մը տակը ծակ:  
Կամ՝

Անոր քով  
Յաուն խօսք մի ընէք  
- Ինքը ինչ աքլորներեն է-:  
Կամ՝

Դժբախտութիւնը ընտրեց-  
Ըսաւ - կայ ու կը մնայ  
Երջանկութիւնը վարանցուկ է միջդեռ:  
Կամ՝

Քերթուածին  
Վերջին տողը գրուեր է շատունց  
Միջ կը կարծենք նոր գրել ամեն օր:  
Գիտեսնալով, որ վերջին տողը գրում է  
ո՛չ բանաստեղծը, և առաջին տողը էլ է մի  
այլ Բանաստեղծ գրել, Ջահրատը շարու-  
նական է ապրել ու գրել իր բարի, ճըշ-  
մարիտ, անհատկապես բանաստեղ-  
ծությունը՝ լցնելով ծնունդ ու մահվան  
պարսպը, որ Անուշապուր-կյանք ենք  
ասում:

Կալերի Փիլոյան  
Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ





# 2007-Ը ՀԱՅՏՏԱՐԱՐՎԱԾ Ե ՄԱՅՐԵՆԻ ԼԵՉՎԻ ՏԱՐԻ

## ՂԱՎԻԹ ԳՅՈՒԼԶՈՒՅԱՆ

Այս տարվա օրացույցը թերթելիս աչքերս հանկարծ անշարժացան կարմրատառ **փետրվարի 21-ին**, բանից պարզվում է՝ նորանկախ Հայաստանում տոն է եղել այդ օրը, տոնանունն էլ՝ **Մայրենի լեզվի օր...**

Վիրավորանքի, ինքնահեզմանքի ու արհամարհանքի խառնուրդով ժպտանալով մի բան է ուրվագծվում շուրթերիս շուրջը՝ լուրջ և հուսահատ օրացույցը նետում եմ սեղանին: Վիր ինչու՝ է այսպես: Նույնիսկ խորհրդային տարիներին, երբ ինտերնացիոնալ պետությունը, «կոմունիզմի շնչով վառված», համբերատար ու հետևողականորեն ռուսացման քաղաքականություն էր իրագործում, կարծես այսչափ տխուր չէր պատկերը. անգամ քաղքությունից բիրտ որոշումներին դիմակայելու հնար էին գտնում ժամանակի մտավորականները՝ հորդորելով, երբեմն էլ ուղղակի ստիպելով խորհրդային Հայաստանի կուլտուրային ընդունելու բռնակալի բռտությունը եթե ոչ բեկոր, ապա գոնե մեղմորդ որոշումներ, և ընթերցել-ժամոքանալով դրանց՝ այնուամենայնիվ դեմքիդ գոյացող ժպիտը, վիրավորանքից բացի, նաև հույսի քաղաքատարրեր էր պարունակում: Ինչու՞ է, ուրեմն, այս անմեղ տոնացույց ամսաթիվն այսպես փոքրվում ու ուղտելում, թեև տալու տեղ առավել խոր խոցում ինձ այն էլ այսօր, երբ մեր երկրում օրենսդրությամբ է հայերենը գերակա լեզու: Հասկանալու համար դիմեմք մեր ոչ հեռավոր անցյալի պատմության օգնությանը:

Առաջին հանրապետության օրոք պետական լեզու էր հռչակված հայերենը: Այդ նույն կարգավիճակն ուներ մեր լեզուն խորհրդային Հայաստանի երեք սահմանադրություններում: Խորհրդային Հայաստանում նախքան առաջին սահմանադրության ընդունումն էլ պետական լեզու

**... Սակայն Մյասնիկյանը, Աղասի Խանջյանը, հետագայում՝ Կարեն Դեմիրճյանը, ընդգծված ազգային դիմագիծ ունեին ...**

կանին: Չուտ «Նեղ» լեզվական սպանդ իրագործեց անձամբ Մտակունը իր մի հրավարտակով, ըստ որի ազգային լեզուներում մինչ այդ սեփական բառերով անվանվող **կոմունիստական-քաղաքական հասկացությունները** պիտի փոխարինվեին միջազգային համարժեքներով, այսպես ոչ թե «կուսակցություն», այլ «պարտիս», ոչ

պահանջում է ասել, որ նույն ժամանակաշրջանում ոչ մեր հարևան բազմազգ փրատանը, ոչ էլ մերձափայլ հանրապետությունները նման խնդիր չեն ունեցել, ասել կուզի բռնատիրությունը բռնատիրություն, բայց եթե ներսից օտարաճալու ցանկություն չի կերպ, այդքան խնձկած չէր լինի գրեթե միատարր ազգաբնակչություն



տանի այլ վայրերից ուղարկված բոլոր (բնականաբար ռուսերեն) գրություններին հայերեն է պատասխանում...

«Լեռնակառուցման» բուռն շրջանում 1987-ին, մի նոր «փորձառական» իրահանգ է ստանում Խ. Արուսյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը. Մոսկվան որոշում է, որ ինստիտուտի հայկական բաժանմանը հարկադրաբար առարկաները ներառյալ հայերենը, հարկ է անցնել ռուսերեն...

Միայն այս ինչպիսի տարիների լեզվաքաղաքականությանն ոչ ամբողջական, բայց իրական պատկերը: Եվ այս ամենի իմացությանը ու ըմբռնմանը էր, որ անկախաբար Հայաստանը պիտի մշակեր իր լեզվաքաղաքականությունը: Միայն պատրաստակամությունը դրսևորվեց հենց անկախացման բուն փաստագրով՝ Հռչակագրով, այնուհետև ՀՀ «Լեզվի մասին» օրենքով, սպա նաև Սահմանադրությամբ: Լեզվի օրենքի մեջ, բացի հայերենի գերակայությունն ապահովող դրույթներից, կա հատուկ հոդված նաև ազգային փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ, որով հնարավորություն է տրվում նրանց կրթություն ապահովել իրենց մայրենի լեզուներով. մի բան, որ չէք գտնի աշխարհի և ոչ մի երկրի մեծամասնափայլ փաստագրերում՝ չհաշված միջազգային համաձայնագրերը (կունվենցիա), որոնք մեծ մասամբ ընդունվում են հավուր պատշաճի. և չնայած սրան հենց մեր պատգամավորներն ու պատգամավորական խմբակցություններն են (ոչ բոլորը, իհարկե), որ ազգամուտքուն են համաձայնում Լեզվի օրենքի գոյությունը: Նույնիսկ Կարավարության պաշտոնյաները, որ իրենց պաշտոնն զբաղեցնում են օրենսդրության կոդեքսի կոչելու համար, մեկ անգամ էլ, որ ուսմահարել են ՀՀ Սահմանադրությունն ու Լեզվի օրենքը: Ստորև ուղում են ներկայացնել մերօրյա լեզվական կարգության մտավոր պատկերը, և թող ընթերցողն ինքը որոշի՝ մեղքն ավելի շատ դրո՞ւ էլ է պետք հայտնաբերել Մոսկվաներում՝ մեզվից հեռու, թե՛ մեր ներսում: Ինչքան էլ տարօրինակ թվա, փաստը այն է, որ Լեզվի օրենքի առաջնային խախտող եղել է շարունակում է մնալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: 1990-ականների սկզբին աշխատում էր լուսավորության (այն ժամանակ) նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում: Մինչ պատրաստվում էինք հաջորդ ուսումնական տարվա ուսումնական պլանները կազմել (ժամաբաշխումները ըստ առարկաների) հաստատման ուղարկելու նախարարություն, նախարարությունից ինստիտուտ ուղարկեցին արդեն հաստատված ուսումնական պլանների բոլոր դասարաններում հայոց լեզվի դասաժամերի կրճատմամբ. երբ, երբդիպելով այն ժամանակվա փոխնախարար Մշտու Դաբաբյանին, հարցրիմք, թե այդ ինչ են արել, դեռ խորհրդային տարիներին էինք դժգոհում հայերենի ժամերի սակավությունից, եթե ավելացնել չէին կարող, գոնե երա՞ծ պահպանեին, հետևեց նրա պատասխանը.

## ՏՈՒՆԱ ՓՈՂՈՅ ԶԻ ԴԱՌՆԱԼՈՒ

եր հայերենը: Ուշագրավ մի փաստ՝ այդ շրջանից. Ալեքսանդր Մյասնիկյանի կարգադրությամբ պաշտոնան է լինում մի հիմնարկի տնօրեն այդ հիմնարկում գործակալությունը ռուսերեն անցկացնելու համար. Մյասնիկյանն ինքը ծավալվում էր հրապարակամով հանդես է գալիս մամուլում պախարակելով օրենսդրության կոպիտ խախտման իրողությունը՝ ի սաստ բուրժուական նկրտումներ ունեցող հնարավոր օրինագրացնեթի...

Սակայն Մյասնիկյանը, Աղասի Խանջյանը, հետագայում Կարեն Դեմիրճյանը, ինչքան էլ ժամանակի ու պաշտոնի բերումով կոմունիստական գաղափարախոսություն իրականացնողներ լինեին, միևնույն է, ընդգծված ազգային դիմագիծ ունեին, և թող տապավորություն չստեղծվի, թե հիսցած են խորհրդային ժամանակաշրջանի լեզվաքաղաքականությանը. ընդհանրապես, օրերիս լեզվական քաղաքականությունը շարունակություն է մատարող հասարակարգի ինչպիսի ուղորտի ըմբռնումների, ավագ, սաստկացված շարունակությունը...

Շատ է խոսվել 37 սև թվականի մասին, շատ է խոսվել մարդկային խորտակված ճակատագրերի մասին, խոսվել է մտավորականների ու մտավորականության, ասել է մտավորական մեծնորտի փրծման մասին, և այնուամենայնիվ կարծում եմ այդ մեծնորտի խեղձում իսկությունը դեռ խորթությամբ չի ընկալվել: Բանն այն է, որ այդ տարիներին, ժամանակակիցների վկայությամբ, Երևանում Աստաֆյան (Արուսյան) փողոցով քայլելիս ականջի համար սովորական էր գրական հայերեն խոսք ու զրույց լսելը. անա սա՛ էր նաև համարվող գրական լեզվով մտավորական մեծնորտի փրծումը՝ գրական լեզվի սրածունը...

Իսկ այդ մարդամշակության սպանող Հայաստանում կրկնվեց ոչ միայն 49 թվա-

թե «խորհրդային», այլ «սովետական», ոչ թե «հանրապետություն», այլ «ռեպուբլիկա», ոչ թե «հեղափոխություն», այլ «ռեվոլյուցիա», ոչ թե «սահմանադրություն», այլ «կոմունիստիզմ» և այլն, և այլն: Վերջ պատահական չեն ընդգծել «կոմունիստական-քաղաքական հասկացությունները». այս ուղղությամբ հրահանգված էր դրսից. բայց դուք մտիկ արեք ժամանակի մեր պետութենապաշտ ու կոմունիստական տենչ մտավորականներին. իրար հեթը չտալով, նախաձեռնությունն իրարից խլելով սկսում են «կենսաբանությունը» փոխարինել «բիոլոգիայով», «երկրաբանությունը»՝ «գեոլոգիայով» և, ո՛վ ուրախություն, «բանասիրությունը»՝ «ֆիլոլոգիայով»... 60-ականներին միայն Գեղամ Մարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Պարույր Սևակի և այլոց հրապարակային հորդորներից հետո, տերմինաբանական կոմիտեին հաջողվում է համապատասխան որոշմամբ վերադարձնել օտարված անվանումները:

60-ականների ազգային գաղթոնքից զուգընթաց արդեն իրենց թվաքանակն էին մեծացնում ռուսական դպրոցներն ու մանկապարտեզները: 80-ականներին ծնվեցին էին մեր օտարաճող հայրենակիցները. հարյուրավոր ընտանիքի ստորագրությամբ բողոքագրեր էին ուղարկվում Մոսկվա, թե 60 տարի է արդեն խորհրդային Միության կազմում ենք, բայց երևանի այսինչ բաղամասում դեռ ոչ մի ռուսական դպրոց չկա («Դե եկ, վարդապետ, ու մի խենթանա»): Խորհրդային պետության փլուզման շեմին Հայաստանի շաշկերտության 30 տոկոսից ավելին ռուսական դպրոցներում էր սովորում, որտեղ ակադեմիային բոլոր առարկաները ռուսերեն էին դասավանդվում, իսկ հայերենն անցնում էին ըստ ցանկության (որպես կանոն չէին անցնում): Արդարությունը, սակայն,

ունեցող Հայաստանի իրավիճակը: Եվ այնուամենայնիվ բռնապետությունը ստեպ-ստեպ հիշեցնում էր իր գոյությունը Մոսկվայից այս կամ այն «մարդասիրական»-ինտերնացիոնալ որոշումն ընդունելով Հայաստանի համար: Այսպես 70-ականներին բուհերի ընդունելության ըըմբռնություններից մեկի շեմին, հրահանգված է հանրապետության բուհերում բոլոր ըըմբռնություններն անցկացնել ռուսերեն. Ի պատիվ ժամանակի դասախոսների և ի սուս նրանց միակամության բեկանվում է հրահանգը: Այդ նույն տարիներին նաև հրահանգվում է պետական պարտական թանախրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում մասնագիտական առարկաներից մեկի դասավանդումն անցկացնել ռուսերեն. սա նույնպես չի իրականանում: 1983-ին անձամբ Անդրոպովի կարգադրությամբ համալսարանի բոլոր ֆակուլտետների ռուսական բաժինների ուսանողների կրթաթոշակն ավելացվում է 15 տոկոսով. ուսանողական ցուցիցը հետո այդ անարդարությունն էլ է վերանում: 1978-ի խորհրդային Հայաստանի սահմանադրության նախագծում հանկարծ էր հայերենի պետական լեզու լինելու կետը. մտավորականների արագ ու համաձայնեցված գործողությունների շնորհիվ արդեն բուն սահմանադրության մեջ վերականգնվում է այդ կետը. այդ ընթացքում իր ընդգնուններով աչքի է ընկնում Գրիգոր Խանջյանը. Կապուտիկյանն է նաևակ ուղարկում Բրեժնևին, ակադեմիկոս Գուրգեն Սևակը համալսարանի ճիտերի մեծ դասիչումն հայտարարում է, թե պետական գաղտնիք է ռուսական դպրոցներում սովորող հայ աշակերտների թիվը, և ինքն էլ հրապարակում-գաղտնագրեծով է այդ թիվը. ինքնատիպ գործելանք է որոնքում այդ ընթացքում Վիկտոր Համբարձումյանը. Մոսկվայից և Ռուսաս-

տողը եղել է շարունակում է մնալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: 1990-ականների սկզբին աշխատում էր լուսավորության (այն ժամանակ) նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում: Մինչ պատրաստվում էինք հաջորդ ուսումնական տարվա ուսումնական պլանները կազմել (ժամաբաշխումները ըստ առարկաների) հաստատման ուղարկելու նախարարություն, նախարարությունից ինստիտուտ ուղարկեցին արդեն հաստատված ուսումնական պլանների բոլոր դասարաններում հայոց լեզվի դասաժամերի կրճատմամբ. երբ, երբդիպելով այն ժամանակվա փոխնախարար Մշտու Դաբաբյանին, հարցրիմք, թե այդ ինչ են արել, դեռ խորհրդային տարիներին էինք դժգոհում հայերենի ժամերի սակավությունից, եթե ավելացնել չէին կարող, գոնե երա՞ծ պահպանեին, հետևեց նրա պատասխանը.

«Աս Ի՞նչ անեմք, կոմերիտականների մասին լիքը օրինակներ կային, հանել եմք բոլորը, գիրքը փոքրացել է: Մասն են լավագույն երգիծաբանը նա է, ով կրկանությունից է վերցնում իրական ավելեշուները ոչինչ չավելացնելով: Միայն թե թանկ է նստում մեզ վրա այդ իրականությունը...»

Նշեն, որ Դաբաբյանը Բլեյանի կարերից էր. իսկ Բլեյանը վարդուց էր սկսել արշավանքը հայոց լեզվի դեմ: Լեզուն «Լեռնադի մատուցելու» կերծ մտահոգությամբ էր դպրոցից հանել էր պետականությունը որպես առարկա, և այդ անբերական դպրոցի 5-րդ դասարանում գրաբար էր սովորեցնում. դպրոցն էլ քերականի անունով է Մխիթար Սեբաստացի: Այն, որ Բլեյանը «կենդանի լեզվով» պահանջը իրոք շղար էր, վերջնականապես համոզվեցի «Դե՛ս ու՛ր դե՛ս» հեռուստատարող դաշարի հաղորդումները մեկի ժամանակ (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

# Մեծ Դավթի կիրականների ՈՍԿԵ ՇՐՊԱՆ

## ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ



Մեր եկեղեցու ծխակարգում Մեծ Պահքի շրջանը «ոսկե շրթա» է կազմում, ուր ամեն օղակ կիրակի, ունի իր խորհուրդը, իսկ բոլորը միասին կարծես ներկայացնում են Եդեմական պարտեզից մինչև Գողգոթա տանող ճանապարհը, այսինքն մարդկության փրկագործության ուղին:

Փետրվարի 19-ից, համաձայն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու օրացույցի, սկսվել է Մեծ Պահքը: Մեծ Պահքի յուրաքանչյուր կիրակի իր անվանումն ունի, և փետրվարի 25-ի կիրակին, որ Մեծ Պահքի երկրորդ կիրակին է, կոչվում է

### Արտաքսման կիրակի:

Արտաքսման կիրակին իր անունը և իմաստը ստանում է առաջին Բուն Բարեկենդանի կիրակի-ով հիշատակված մարդկային երջանիկ վիճակի ողբերգական վախճանից, այսինքն մեզ հիշեցնում է մարդու դրախտից արտաքսվելը:

Այս կիրակին հիշեցնում է մեզ Ադամի ու Եվայի պատվիրանազանության, անհնազանդության և դրախտից արտաքսման մասին և ապա հրավիրում է մեզ խորհրդածելու մեղքի, ապաշխարության, Աստծու ներողամտության ու ողորմածության շուրջ...

Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով ու նմանությամբ և բնակեցրեց Եդեմի պարտեզում: Աստված դրախտի մեջ դրեց մարդուն փոխարենը ոչինչ չպահանջելով բացառությամբ մեկ սահմանափակումի. մարդուն արգելված էր ուտել բարու և չարի գիտության ծառից: Սակայն ազատությունը առատության մեջ մարդուն մղեց կործանման: Անհնազանդությունը պատճառ հանդիսացավ, որ նրանք դրախտից արտաքսվեցին: Բարու և չարի գիտության ծառի պտուղը ճաշակելուց հետո առա-

ջին բանը, որ տեսան Ադամն ու Եվան, իրենց ներկությունն էր: Եվ, ուրեմն, առաջին հերթին նրանք հոգեպես էին մերկացել՝ զրկվելով աստվածային շնորհներից:

Ադամ-Եվայի պատմությունը յուրաքանչյուրիս պատմությունն է, դժբախտաբար, հավերժորեն կրկնվող և մշտնջենական ներկա: Մարդկանցից ո՞վ չի ունեցել իր փորձության ժամերը, ճիշտ՝ Ադամի ու Եվայի նման: Ո՞վ չի հրապուրվել «արգելված պտուղի» տեսքով, ո՞վ իր նմանների կամ իր ներաշխարհի ծայրը չի լսել «Մի վախեցիր, կեր, կհասունանաս, կիմաստանաս, աչքերդ կբացվեն, կմեծանաս, փորձառություն ձեռք կբերես», և սրանց նման հազար ու մի փափսուկներ: Ո՞վ իր ձեռքն «արգելված պտուղին» չի երկարել, և, վերջապես, ո՞վ այն նաև ուրիշներին չի տվել... Ո՞ր մեղքն իր կամավոր կամ ակամա մեղաակիցները չի ունեցել: Ո՞վ չի հեռացել իր կրոնից, իր եկեղեցուց, որոնց մեջ մարդն զգում է Աստծո ներկայությունը: Եվ վերջապես, ո՞վ չի զգացել կամ ուրիշ դեմքին երբևէ չի կարողացել իր կամ նրա «դրախտից արտաքսված» լինելը...

Սրանք այլևս Աստվածաշնչի էջերից վերցրած պատմություններ չեն մարդու նախածնողների մասին զրկված երեք հազար տարիներ առաջ: Սրանք այժմեական և ամենօրյա երևույթներ են, որոնց դերակատարներն ամեն օր և ամենուրեք ապրող, շրջող ու շնչող մարդիկ են. ես եմ, դու ես, նա է, ամենքս ենք: Ամենքս էլ Ներսես Շնորհալու հետ կարող ենք առանց ստելու ասել. «Գող եղէ մեղաց, գտող կորստեան, գուր իմն փորեցի»:

Ուրեմն, Մեծ Պահքի Արտաքսման կիրակին նախածնողների ողբերգության միջից մեզ հիշեցնում է, թե մեղքն Աստծու կամքի և օրենքի ամենտույժ է, որը մեզ բաժանում է մեր երջանկության աղբյուրից մեր կրարչից:

Դրախտային այս դրվագը մեզ հիշեցնում է նաև, թե յուրաքանչյուր վնասակար մարդ է իր մեջ իր թուլյուն ունի, որը կամ հիվանդացնում, կամ էլ մեռցնում է մարմինը:

Կյրպես էլ յուրաքանչյուր մեղք հոգի, այսինքն՝ մարդու մտածումների և նեղքին ապրումների ճանաչելի աշխարհը, խանգարելու, այլասերելու,

մեռցնելու կարողությունն իր մեջ դեղեր է հնարել: Աստծո նախախնամությունը մարդու համար այդ դարձաններն էլ է հայթայթել: Աստված նախամարդուն «նախ հույսն էր տվել, որ մի օր նրա «զավակը» պիտի ջախջախի «օձի գլուխը»: Եվ աստվածային այդ խոստումն իրականացավ Աստծո Որդու մարմնացումով. Ով միաժամանակ «Մարդու Որդի» եղավ և հնարավորություն ստեղծեց, որ աղանդորդին կարողանա իրեն ազատագրել մեղքի ժիրաններից՝ վերագտնելու համար իր կորուսյալ դրախտը:



ԳՈՒԳԱՐԱՏ ԹԵՄԻ ՔՐԻՍՏՈՆԵԿԱՆ ՂԱՏԻՐԱՎԱԿՈՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Արարիչ Աստված, Ադամը և Եվան Եդեմի պարտեզում, նրանց արտաքսումը Եդեմից: Նկարագրողն էր Գաղաթի Աստվածաշնչից

# ՏՈՆՆ ՓՈՂՈՑ ԳԻ ԴՎՈՒՆԱԿՈՒ

(Վկորդ՝ Թ-դ երամ)  
Գրա տված հարցազրույցից. «Մեր լեզուն այսօր պետական լեզու է, և կարիք չկա, որ մայրենի լեզվի մասին բանաստեղծություններ սովորեն պարոզում...»

Լեզվի օրենքի պահանջներից մեկով էլ պարտադիր է հայոց լեզվից դպրոցի պետական ավարտական և բուհերի ընդունելության քննությունը: Բլեյանը կիսով չափ սահմանափակեց այդ պարտադրանքը՝ «հօգուտ և ի սեր» աշակերտի համատեղելով այդ քննությունները (այսօր կատարվել է նրա «մուրազը» լիակատար համատեղում է ապահովված): Հարցը բնավ էլ ընդունելության քննությունների գուտ բարոյական խնդրին չի վերաբերում. բանն այն է, որ ոչ մի առարկայի իմացությանը որևէ մտայնորդ այնքան պահանջ չի ներկայացված, որքան հայերենի. այստեղ գործ ունենք օրենքի շրջանցման, ուղղակի շրջանցման փաստի հետ, որը ոչ մայրենի երկրորդական ոլորտ է մղում մեր ազգային մայրենի լեզուն, այլև դրանով նրա պետական լինելու բարձր վարկն է անչափելիորեն նսեմացնում:

Սրան հաջորդում են նախկին փոխնախարար Սիրու Թովույանի մեքենայությունները: «Ռուսաց լեզուն Հայաստանում» (ռուսերեն) հանդեսի համարներից մեկի առաջնորդում այն միտքն էր

արտահայտվում, թե այսօր մեր դպրոցներն այլևս չեն կարող գաղազանվ միայնակու հիմքով, և անհրաժեշտ է, որ այսուհետև ուսուցումն իրականացվի բազմակեզու հիմքով, այսինքն ուսումնական առարկաները դասավանդվեն ոչ միայն հայերեն: Պատկերացրեք. եթե իրարիդային ժամանակներում Սոնվվային դա չհաջողվեց անել բուհերում, Թովույանը կարողացավ իրականացնել որոշ դպրոցներում. ներկա են եղել «փորձառական» (փորձաճարհի) դասերի և տեսել, թե ինչ են անում երեխայի ուղեղի ու հոգու հետ. բոլոր առարկաները ներառյալ հայերենը, անցնում են երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն. շարունակվում է այսօր այդ «գիտափորձ» երկլեզու (կարծես արդեն նույնիսկ բազմակեզու) «մեքողով» ուսուցումը... Նույն Թովույանը իր աշխատանքայնում նաև հետևյալը հայտարարեց. «Ընկերներ, մենք այսօր գլոբալիզացիոն ժամանակներում ենք ապրում և պարտավոր ենք մեր վերաբերմունքը փոխել թե պետական լեզվի, թե ուսուցման լեզվի նկատմամբ... Եվ փոխեց, գործակցելով Բելա-Եսաջանյանի (երկլեզու «մեքողով» բարոդի) և նախկին պատգամավոր Տարոն Սահակյանի հետ. վերջինիս խրախուսում էր հանդես գալ պատգամավորական նախածեղծությանը: Նա էլ հանդես եկավ առաջարկելով ազգային միատարր մեր

պետությանը երկրորդ պետական լեզու՝ ռուսերեն: Սրանով էլ ոգևորվեց Ռուսաստանը. Պետդումայի նախկին նախագահ Սեյեդյովի զվաճարությանը մի պատկառելի պատվիրակություն ժամանեց Հայաստան շնորհիլու մեր անլեզու ժողովրդին ռուսերենը պետական կարգափոխելով. այս անգամ էլ արծանք, բայց դա վերջը չէր: ՀԺԿ պատգամավորական խումբը հանկարծ աշխուժացավ՝ նույն առաջարկությանը հանդես գալով խորհրդանշական **ապրիլի տասնյոթին**, որ օրն է Լեզվի օրենքի ընդունման և ծնողյան օրը՝ այդ կուսակցության հիմնադիր Կարեն Դեմիրճյանի, ում ջանքերով նաև 1978 թվականին համաձայնեցված գործեցին մեր մտավորականները՝ պահպանելու այնժամանակա Սահանարության մեջ հայերենի պետական լեզու լինելու կարգավիճակը («Դե եվ, վարդապետ...»): Սա էլ վերջը չէր. հերթը «Օրինաց երկրին» էր. սրանք էլ Ազգային ժողովում հաջողություն չունեցան, բայց փոխարենը Ս. Երիցյանի նախարար դառնալով՝ իրենց ուզածը զգալապես իրագործեցին հստակ գործակերպով և ենթաօրենսդրական ակտերով՝ բոլորն էլ լեզվի օրենքին հակասող...

Է՛լ ինչ ասեմ, ո՞ր մեկն ասեմ Լեզվի տեսչության այսօրվա պետի մասիաությունները՝ իր լեզվական օրենսդրությունը խախտողների համար սահմանված

կես միլիոն տուգանքի չա՛փը, որի փաստը միայն բավական է, որ մեր գործարարներն անմիջապես հայացնեն իրենց օտարաստա ջուգանակներն ու զովագրային վախճանվեցին. բայց այդպես էլ ոչինչ չի փոխվում, տարօրինակներ, հայերեն հեռուստաալորողունները, որոնց գոյությունից սարսափած մտածում են, թե հանկարծ ջո բացակայությամբ երեխաները հայկական հեռուստաալիք չմիացնեն, թե՛ հայոց լեզվի դասագիրք կոչված խաչատուրյունները...

Խնդրե՛մ մեր գործընդ, այդ ինչ խորության եք ճանաչել մեր ժողովրդին՝ իր չափի անցած այլափրություն, որ իհասակում ու չբավարարվելով ձեր նախորդների հայրենասիրական ներողներից՝ ի՞նքներդ եք ներբողել հայրենասիրություն-լեզվապետություն ու էլ չգիտցած եք հեռացել այս աշխարհից...

Այս անեմից հետո ևս մի հայացք են նետում **«Փետրվարի 21»** օրացուցային կարմրատառ նշումն ու մտածում, որ այդ օրը սահմանողն այս մեղք չունի. երկն նա էլ այս մտածումներն է ունեցել. բայց ես էլ չեմ մեղավոր, որ չեմ կամենում գտեղկություն փողոցից իմ տուն մտնի հեռուստացույցի միջոցով, չեմ ուզում տունս փողոց դառնա...

### ՎՃԻՌ ԿԱՅԱՑՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԶԲՈՆՈՒՄ ԵՐ ՊՈՐՈՎԿՈՒՄ

Լոռու հայոց թագավոր Կյուրիկե Բագրատունին իր աթոռամիտ Լոռե ամրոցում սաղարթածոխ մի փոքրիկ պուրակ ուներ, որտեղ սիրում էր գրասենյակ միայնակ:

Որևէ վճիռ կայացնելուց առաջ Կյուրիկե Բագրատունին մտնում էր պուրակը, ետ ու առաջ քայլում

### ՊԱՏԻԺ ԸՍՏ ՄԵԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ

Տասներկու-տասներեքերորդ դարերի մեծ առաջավոր ու օրենսդիր Մխիթար Գոշի Դատաստանագրքում գրված է, որ սատանայի դրոմամբ ծառ կտրողին պիտի դատել: Պատժաչափն այսպիսին էր. պիտի հաշվել, թե ծառը քանի տարի բերք չի տա և ամբողջ արծեքը գանձել կտրողից:

Հիմա դուք կասեք, թե օրենսդիր Մխիթար Գոշը ինչու է գրել «սատանայի դրոմամբ»: Մեր օրերի ձևակերպմամբ դա նշանակում է «խելքին փչել է»:

Ապօրինաբար ծառ կտրողի մասին ասում են, որ

### ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ԴԱՏՈՒՄ ԾԱՌ ԿՏՐՈՂԻՆ ԸՍՏ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ

Տասներեքերորդ դարի Կիլիկյան Հայաստանի երևելի գորավար, դիվանագետ, իրավագետ ու պատմագիր Սմբատ Սպարապետը, որ կոչվում էր նաև Սմբատ Գունդստաբլ, 1265 թվականին մի դատաստանագիրք է կազմում, որով մեր հենց դատ ու դատաստան էին անում:

Այդ դատաստանագրքի 198-րդ հոդվածով պատ-

ծառերի արանքում և հանգիստ մտորում իր արծակելիք իրավարտակի մասին:

- Ծառուտը, ասում էր արքան,- ինչ-որ չափով սքափեցնում է մարդուն, չափավորում նրա և՛ զայրությո՞ւյթը, և՛ ուղորդությունը:

նրա խելքը տեղում չէ:

Ծառը պիտի խնամել իր բոլոր օգուտների համար:

Մի անգամ Մխիթար Գոշին հարցրին.

- Ինչու՞ ես քո Դատաստանագրքում այդքան խիտ պատիժ սահմանել ծառ կտրողի համար:

Մի օրենսդիրը պատասխանել է.

- Ծառ կտրելը մարդասպանության չափ մահացու մեղք է, մրգատու ծառ կտրողը մարդ էլ կսպանի:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «Սոսյաց անտառ» գրքից

### Ս Ե Մ Ի Ն Ա Ր Լ Ե Զ Ա Ն Ո Ւ Մ

Իրավունք: Ո՛վ է այն մեզ տվել: Ո՛վ կարող է խել, ո՛վ է պաշտպանում այն մեզ համար և օգնում լիարժեք օգուտել դրանից:

Այս ամենի շուրջ, բազմաթիվ պատասխանների հստակ արծարծմամբ, վերջերս քննարկում էր ծավալվել երիտասարդական գործողությունների «Լեջան» ակումբում, որտեղ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի ներկայացուցիչները ակումբի անդամ երիտասարդների համար կազմակերպել էին «Լոռու մարզի համայնքային առաջնորդների սեմինար» շարքի հերթական դասընթացը՝ իրավունքի և օրենսդրության հիմնադրույթների վերաբերյալ: Դասընթացը վարում էր ՀՄԻԿ-ի կրթության բաժնի վարիչ Արայիկ Պապիկյանը: Սա ՀՄԻԿ-ի կողմից Լեջանի երիտասարդների համար անցկացվող 2-րդ սեմինարն էր: .

Ի տարբերություն նախորդի՝ այս սեմինարը նաև գործնական էր և ընդգրկում էր քննարկումների լայն շրջանակ՝ իրավունքի և մարդու իրավունքների հասկացություն, սահմանադրական փոփոխությունների, վարչարարական հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի ներկայացում, քաղաքացիական օրենսգրքի հիմնադրույթներ:

Դասընթացն ուղեկցվում էր խմբային գործնական վարժություններով, ինչը նյութը դարձնում էր առավել մտաշելի՝ նախապես յուրացվելով խմբի ներսում: Տեսական նյութի ընկալմանը նպաստում էին նաև քերթ, բարեկամական մթնոլորտը և երկկողմանի ինտերակտիվ քննարկումները:

ՀՈՒՄԿ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ Լեջանի ԵԳԱ անդամ

## Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Ն Ր Օ Գ Ո Ւ Տ Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն



Ու Շ Ա Դ Ր Ու Թ Յ ՈՒՆ

### Անվճար իրավաբանական խորհրդատվություն

Հարգելի ընթերցող,

«Սահմանադրական օրինակաճանության ամրապնդում մարդու իրավունքների պաշտպանության միջոցով» ծրագրի շրջանակներում ՀՄԻԿ-ը իրականացնում է **անվճար իրավաբանական խորհրդատվություն**:

Չեզ հուզող հարցերով դուք կարող եք դիմել՝ այցելելով ՀՄԻԿ գրասենյակ, կամ դիմումներն առաքել նամակով, ֆաքսով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով՝ [apapikyan@acrpc.am](mailto:apapikyan@acrpc.am):

Դիմումների վերաբերյալ կտրվեն գրավոր կամ բանավոր խորհրդատվություններ, իսկ հասարակական հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ համապատասխան նյութեր կտպագրվեն նաև «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթում:

Ծրագիրն իրականացվում է Հատկապես ինքնինչնել (CPI/CASP-ի, ԱՄՆ ԱԶԳ-ի և ԳԿԾԱԿ) կազմակերպության աջակցությամբ:

### Հարգելի գործընկերներ՝

Ընտրելով «Չկա հասարակություն անաճ իրավունքի» կարգախոսը և հենարանական բաղձալով տեսնել «Սիրո և հանդուրժողականության սկզբունքներով ապրող աշխարհ, ուր տիրում են ի վերուստ տրված իրավունքն ու արդարությունը», մենք ևս նպատակադրվել ենք՝ նպաստել իրավական մշակույթի զարգացմանը և քաղաքական տարբեր գաղափարախոսությունների հանդեպ իրավունքի տիրապետության հաստատմանը, բացահայտել իրավունքի ճշմարիտ էությունն ու նշանակությունը հասարակության լայն խավերի համար, պահպանել, նաև հարստացնել

հոգևոր, ազգային և բարոյական դարավոր արժեքներն ու ավանդույթները, լինել արդարության և ճշմարտության խոսակող, բազմակարծության սկզբունքներին համապատասխան լսելի դարձնել յուրաքանչյուր անհատի ձայնը: «Իրավական մշակույթը» ապաքաղաքական թերթ է, քանզի իրավունքն ու մարդու իրավունքներն իրենց ճշմարիտ բանաձևմամբ վեր են քաղաքականությունից:

Թերթի խմբագրակազմը Չեզ առաջարկում է համագործակցել՝ հանրապետությունում, մասնավորապես, Չեր իսկ մարզում, քաղաքում, գյուղում, աշխատավայրում և կրթական հաստատություններում ծառայած՝ քաղաքացիներին հուզող իրավական, նաև սոցիալական տարբեր խնդիրներն ու իմնաստիարակները լուսաբանելու համար:

Կրպարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին: Հետաքրքրական և ուշագրավ նյութերը տեղ կգտնեն թերթի էջերում, իսկ հեղինակներին կվճարվեն հոնորարներ:



Սկսած ենք Չեր հոդվածներին, ակնարկներին, տեղեկատվությանը (ցանկալի է՝ նուրբերն ուղարկվելն էլեկտրոնային փոստով):

«Իրավական մշակույթ»-ի խմբագրակազմ

Հրատարակության Գ տարի  
Հիմնադիր և իրատարակիչ  
Հայկական սահմանադրական իրավապաշտպանական կենտրոն  
ՀՖ, 2002, ք. Վանաձոր, Երևանցու 1-ին նրք., թիվ 2  
Հեռ.՝ (+374 322) 2-29-67  
Էլ. փոստ՝ [ic@acrpc.am](mailto:ic@acrpc.am) Դանակացի էջ՝ [www.acrpc.am](http://www.acrpc.am)

Թերթը տպագրվում է Վրաստանում և Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության հովանավորությամբ:  
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:  
Գլխավոր խմբագիր՝ Հրաչյա ՍԱՐԻՔԻԱՆ  
Խմբագիր՝ Ալեկ ՍԱՐԻՔԻԱՆ  
Համակարգչային ծավալող՝ Նարինե ԱՍՐԻՔԻԱՆ

Ծավալը՝ 2 տպագրական մասով:  
Ստորագրված է տպագրության 28.02.2007 թ.:  
Տպագրմանը՝ 2000:  
Տպագրվել է «Չափազանք» հրատարակչատանը:

Իրավական մշակույթ  
Legal Culture  
Правовая культура  
Տարածվում է անվճար